51. ՋՀՈՒԴՆ ՈՒ ՀԱՅԸ

Հայաստանցի մի հայ տղա կէրթա Ըստամբոլ, կարթալ-գրել սովրի, կդառնա ուսումնական մարթ։ Կտեսնի վաճառականներին, օր շատ հարուստ ին, առուտուր կէնին, լավ կապրին, ինքն էլ ուր միտք կը փոխե, կըսե օր ես լե ըտոնց պես վաճառական մարթ պըտի էզնիմ։

Կէրթա կը ծանոթանա մե ջհուդ վաճառականի մե, կտեսնի օր էտիկ նստե ու քուրսիք[1] է ծախում։

Կըսե.— Էտ քուրսին ի՞նչ ածե։

Կըսե.— Էտ ածե մե օսկիմե։

Կըսե.— Էտ ի՞նչ փետից է շիքուկ։

Կըսե.— Էտիկ գուզի[2] փետից է շիքուկ։

Տղեն էտ վախտվանից միտք է դնում՝ «էրթամ մեր գեղ, մեր գուզի ծառները կտռտեմ, բերիմ իտամ ուստեք, էտման քուրսի կը շիքին ու կը տանիմ Ըստամբոլ ծախիմ»։ Էտմալ լը կէնե։

Կէրթա ուր գեղ, ուրանց բաղի գզի ծառներ կը կտռե, կըլնա հարուր գամի ու կը տանե Ըստամբոլ, շիքել կիտա քանի մե հարուր հաղար հատ ու դուս կը բերե մեչ քաղաքին, մե մեծ տուն լիք կըլնա։

Ըտոր կը տեսնա ջհուդ վաճառականըմ, կըսե.—Տղա՛, էս հ՝ո՞ւր էր, չէրևիր։

— Հա՜, չըսիս, հըմալ մեծ գործ իմ բռնի օր, էլ ըսելու չէ։

---

1 Աթոռ (Ծ. Բ.)։

2 Ընկուզի (Ծ. Բ.)։

Ջհուդը կը հարցու կըսե.— Արի, էրթանք մեր տուն։

Ու կը տանե տուն, կնկան կըսե.— Կնիկ, խաֆե մե էփե մեր խոնախին։

Ջհուդն ու ուր կնիկ հըտ իրար կը ջարթեն ուրանց թանդ քուրսեբններին, օր խայֆա էփեն։ Հայ տղեն, օր տեսավ, մնաց շիվար։

— Ա՛յ մարթ, տունըդ քանդվի, հ՚օրի՞ կը ջարթես էտ խորոտիկ թանդ քուրսիք։

Ջհուդը կըսե.—Այ քու տունը չիքվի, գիտես՝ հ՚առաչվա քուրսու դի՞նն է ուր վրեն, մկա դառեր է վառելու փետի գին։ Էսիկ կը վառեմ, կէրթամ փետի գնին թագա շիքուկ քուրսի կառնիմ։

Տղեն ըսավ.—Վա՜խ, վա՜խ, իմ չարչարանք զո՞ւր գնաց։

Ու ընկավ մտածմունքի մեչ։ Ջհուդը տեսավ օր տղեն ընկավ խասավաթի մեչ, ըսավ.—Կնիկ, կնիկ, մե դինի բեր։

Կնիկը բերեց յոթը տարվա գինի ու դրեց հացի տախտրկի[1] վրեն։ Լցեց մե խստրկան, տվեց տղին, ըսավ.—Խմե, դարդ մ՚էնի, ես քու սխպերն իմ, ես հ՚ըմեն դիուց քըղի կօգնիմ։

Ու մե էրկու իրեք հատ ըտման խմցուց։ Տղեն հարփավ։ Ըսավ օր.— Ախպեր, էս ի՞նչ պըտի էնիս։

Ըսավ.— Քըղի դինա՞ս ինչ կօգնիմ։ Քու քուրսեք թըխ մնա, ես կը վառիմ, ըտոնց տեղ քըղի էտ խստրկնով օսկի գուզիս, արծաթ գուզիս, ինչ օր հ՚ուզիս, քըղի կիտամ։

Ըսավ.—Լավ,—ու սանատի[2] վրա ձեռք քաշեց։

Տղեն քնավ, դինջացավ, մեկել օր սապախտան գնաց չարսուն, տեսավ օր ուր քուրսեստանուն պես քուրսիք մեկը կը ծախին մեկ օսկի ու կիսու։ Տղեն հոտ նոր զարկեց ուր գլխուն, ըսավ՝ «Հայ վա՜խ, ջհուդ ընձի խափեր է», ու գնաց մե քոշա նստավ, մտածեց։ Ըտոր ըռաստ էկավ մեկ անծանոթ հայ մե։ Ըսավ.—Խո դու հայ չի՞ս։

Ըսավ.—Հայ իմ, բա ի՞նչ իմ։

Ըսավ.— Բա հ՚օրի՞ն ես հ՚մալ մոլոր։

Ու տղեն պատմեց էտ հայուն։

Ըսավ.—Տղա ջան, ըտուր ելք-ճամփա գտնի՝ միննակ մե բան կըսիմ քըղի. արի դու քըղի ձեռք մե ջհուդի շոր առ, հագի, շաբաթ օրը գնա ըտոցա ժամ։ էտ ջհուդներու ադաթն է, ինչ խա-

---

1 Սեղան (Ծ. Բ.)։

2 Պայմանաթուղթ (Ծ. Բ.)։

փեփաութուն օր էնին, կէրթան ուրանց փտփին[1] կը պատմին։ Փափն էլ ըդոր դիմաց ինչ ջուհապ կիտա, դու կը լսիս, ու էտման կէնիս։

Տղեն դնաց, ուրին մե ձեռք ջհուդի շոր առավ, հագավ, շարաթ օր գնաց ըդոց ժամ։ Ջհուդներ հ'ելան իրանց խափեփաութունը իրանց փափին ըսեցին, սրեն էկավ էտ խափող ջհուդին։ Ըսավ.— Փա՜փ, ես էլ հըմալ-հըմալ բան մը էրեցի էն հայ տղին։

Ըբը.—Ի՞նչ էրիր։

— Էլ ի՞նչ պըտի էնիմ,—ըսավ,—ընդոր հարստութուն հ'ըմմեն առա ուր ձեռնեն, խմցուցի, ըսի, էս խստրկանով ինչ օր հ'ուզիս, կիտամ, ու սանատի տակ ձեռք քաշեց։

Փափն ըսավ.—Լավ բան իս էրի, բա հըմա օր էտ տղեն նա՜ օսկի հ'ուզե, նա՜ էլ արծաթ, օր հ'ուզե լու, կեսը էք, կեսը որց, դու էն վախտ կռնա՞ս իտաս։

— Է՜, փափ,— ըսավ,— հ'օրի՞ հըմալ բան պըտի հ'ուզե,— ըսավ, գնաց։

Հայ տղեն լսեց ու ժամուց դուս դնաց։ Մեկ-էրկու օր հ'ետև տղեն էկավ ջհուդի խեչ, ըսավ.

— Ջհուդ ախպեր, մեր սանատով իմ հ'ուզածն տուր։

— Գըլխիս վրեն,—ըսավ,—հ'օրի՞ չըմ իտա։ Օսկի՞ գուզիս, արծա՞թ գուզիս, ինչ օր գուզիս, կիտամ։

Ըսավ.—Չէ, իմ հ'ուզածն է էս խստրկանով լիքը լու տաս, կեսը էք, կեսը որց, օր տանիմ մըր էրկիր, ծախիմ։

Ջհուդը ուր լեզուն խածեց, թե էս մեր փափը սուրբ էր, ի՛մալ գիներ, օր տղեն հըմալ բան պըտի հ'ուզեր։

Ըսավ.—Չէ, ախպեր ջան, ուրիշ բան հ'ուզե, իտամ, լուն ի՞նչ է օր գուզիս։

— Դեհ, օր չես կռնա իտա, տուր իմ ապրանքն։

Ըսավ.— Տար, ախպեր, հալալ էղնի։

Հայը առավ ուր քուրսիք, տարավ չարսուն, ծախեց հատը օսկի ու կիսով, ունեցավ մե խազնա օսկի։ Ջհուդի աշկերը բար չվերուցին, էս անգամ էլման տղին կանչեց, կերցուց, խմցուց, ըսավ.

— Տո ախպեր ջան, քու հոր անուն ի՞նչ է, քու մամու, պարու, քուրոջ, գրկեցի անուն ի՞նչ է, գեղի մեջ ձըր տուն հ'ու՞րտեղ է, հ'ախպուր ձեր դռնեն ինչքա՞ն հեռու է,— ու էտման հարց ու փորց

---

1 Նկատի ունի հրեական ռաբբիին (քահանային) (Ս. Կ.)։

էնելով, տղի էղած-չէղած հ'ըմմեն հ'իմցավ ու էղավ սուտ ախ-պեր, թուխտ մե գրեց ու տվեց հուքմաթ[1]։

Հուքմաթ էտ տղին կը կանչե, կըսե.—Արի, ձեր էրկրից քու ախպերն է էկի։

Կըսե.— Ես ախպեր չունիմ, իմ ախպեր իմալ օր սալդատ գա-ցեր է, հլա չէկեր է։

— Չէ,— կըսե,— քու ախպերն ի էկի ու թուխտ է գրի տվի մը-զի՝ «Օր իմ պզտիկ ախպեր մըր տուն ավիրել է, մըր բաղ -բաղըս-տանի գուզի ծառներ կտռտի բերի քուրսի շիքել է տվի ու ծախի»։

Կըսե.—Էտիկ իմ ախպեր չէղնի, իմ ախպեր չկա։

Կըսե.—Բերի՞նք քու ախպեր հուդա։

Կըսե.—Բերեք։

Ջհուդին կը բերեն, կըսեն.—Իտա քու ախպեր չէ՞։

Կըսե.—Չէ։ Թե իմ ախպերն է, թըխ ըսե իմ պապու անուն, իմ մամու անուն, իմ քըրվըտոց անուն, օր գինամ ախպեր է։

Սուտ ախպեր կը պատմե՝ ինչ օր օղորթ ըտոր պապու, մամու, դեղի դրկիցներու անուն է։ Ու հուքմաթը կավտնա, օր վեց անձր տուն է մացե, մեկն էլ էտ տղեն, յոթ։ Հուքմաթը ըտուր օսկին կը բաժնե յոթ հոգու վրեն։ Վեց բաժին կիտան սուտ ախպորը, մե բա-ժին կը մնա հայ տղին։ Տղեն էլի կը մնա շիվար ու մոլոր։ Շաբաթ օր էլի կը հագնի ջհուդի շորեր, կերթա էնոնց ժամ։ Հ'ըմմեն ջըհուդ-ներ փափին կըսին իրենց խարթախութուն։ Դորն օր կհասնի էտ ջը-հուդին՝ էն էլ կպատմե ուր էրած գործեր։

Փափը կըսե.—Լավ բան ես էրի, աբա էրեսդ հայ տղեն էլման Թուխտ մե տվեց հուքմաթ ու ըսեց՝ «Օր էտիկ իմ ախպերն է, բե-ռեք ըտոր աչքն էլ հանեք, իմ աչքն էլ հանեք ու կիշըռեք. թե իրար չափ էկան, իմ ախպերն է»։ էն վախտ՝ դու մե աչք ունիս, էնիկ՝ էրկու աչք, դու կը հանի՞ս քու աչք։

Ըսավ.—Հըլբըթ չէ։

Տղեն լսեց ու գնաց, խորոտիկ թուխտ մի գրեց ու տվեց հուք-մաթին։ Գրեց, օր՝ «էտիկ իմ ախպեր չէ, էտի սուտ կըսե։ Ես շատ կաղաչեմ հուքմաթեն, օր կանչեք էտ մարթուն, հ'իդա, ըտոր աչք լը հանեք, իմ աչք լը հանեք ու կիշըռեք, թե իրար չափ էղավ, ինենք ախպեր ենք, թե իրար չափ չէղավ, ախպեր չինք»։

Հուքմաթ էլման էտ էրկուսին կանչեց, բերեց ըսավ.—Դու էտ մարթու ախպեր չիս։

---

1 Գավառական կառավարչություն, այստեղ՝ դատարան (Ս. Բ.)։

Ըսավ.— Ես ըսոր հալալ ախպերն իմ։

Ըսավ.— Օր դու ըսոր ախպերն իս, րիր քու աչքն ու էնոր աչքը հանինք, թ'օր իրարու բար էկան, դուք ախպեր իք, թօր չէ, ախպեր չիք։

Ու կանչին աչք հանողին։ Աչք հանողն էկավ։ Ջհուդն օր էնոր ձեռքի չանդըլներ տեսավ, շուտըմ ըսավ.—Ես ըսոր ախպերը չիմ։

Օսկին առան, տվին տղին։

Ջհուդը էլման կանչեց տղին ուր տուն, ըսավ.—Տղա ջան, մկա նոր կավտնամ, օր դու շատ ժիր տղա իս։ Լսեր իմ օր ձեր էրկիր շատ աղվեսներ կան, էն աղվեսների պոչերն է ընձի պետք։ Արի գնա ձեր էրկիր, աղվեսի պոչեր բի, ես կառնիմ։ Մե հատը մե օսկու կառնիմ։

Հ'օժարցան, սանատ գրին, ձեռք քաշեցին, տղեն գնաց ուր էրկիր։ Գնաց, գնեց շատ աղվեսի պոչեր, խուրց-խուրց կապեց, գամին լցեց, բերեց Ըստամբոլ, ջհուդի քով։

Ջհուդը էկավ, տեսավ օր բերեր է, ընդոց միչից մե հատ խոռոտ աղվեսի պոչ վերուց, մե օսկի քցեց տղին։

Տղեն ըսավ.—Իտա ի՞նչ է կէնիս։ Ջէ՞ օր հ'ըմմեն պըտի վերուս։

— Ջէ,—ըսավ,—ես սանատի մեչ գրեր իմ, օր մե հատ պոչ կվերում, կիտամ մեկ օսկի։ Ա'ռ քու մեկ օսկին, տուր իմ մեկ պոչ,—ըսավ ջհուդն ու վերուց աղվեսի պոչ, գնաց։

Տղեն էլման գնաց ըտոց ժամ։ Ջհուդը էլման պատմեց փափին, թը հըմլա բան իմ էրի։

Ըսավ.—Այ, ապրի՛ս, լավ իս էրի, հըմա օգուտ չէրերիս. էտ տղեն քըզի բանմ' էլ չը կոնա էնե։

Տղեն թողեց ժամը, էկավ քաղաք ու մոլըրուկ ման կիգեր։ Ու մե ճատի[1] քոշա նստավ։ Էտ օրը թագավորը գեղացու շորերով վազիրի հետ ման կիգեր, օր ժողովուրթի դրութուն հ'իմներ։ Էտոնք ըռաստ էկան հայ տղին, տեսան օր շատ մոլորված նստել էր։

Ըսավ.—Դու ի՞նչ մարթ իս, այ տղա, ի՞նչ կը մտածիս։

— Է՜հ,—ըսավ,—իմ դարդին ի՞նչ պըտի դարման էնիք, խեղճ մարթիք։

Ըսին.—Պատմե, տղա ջան, պատմե հ'իմնանք։

Տղեն պատմեց ուր գլխի էկածը։ Մարթիք իմացան ու թորկին գացին։ Թաքավոր ուր վազիրին խրկեց տղի խեչ, թե. «Տղա, բան

---

1 Ջաղդի՝ փողոցի (Ծ. Բ.)։

Լ՝ աղվըսու պոչեր առնող կէղնի, էժան չտաս, մեկը հինգ օսկի կըսեսս»։

Տղեն ըսավ.—Լավ,—հըմա ումուգ չուներ։

Թաքավորն օր հասավ ուր դիվան, մե թուխտ մե գրեց.—Ինչ-ըան օր իմ քաղքի մեչ ջհուդ կա, մեծ ու պզտիկ էգուց առավոտուն ըան իմ պալատի գռնեն հ՝ընցնան ու իրանց գլխին մեկ-մեկ աղ-վըսի պոչ կախուկ էղնի, ում գլխեն կախուկ չէղավ, էնոր ես ծով կը թալիմ։

Ջհուդներ օր թուխտը կարթըցին, խառնըվան իրար.—Հ՝ո՞ւր-դից գտնինք աղվըսու պոչիկ,—ըսին մեկը մեկին։

Ջհուդը հըմա օր լսեց, հայ տղի խեչ տեսավ օր պոչեր կը ծախե՝ ամեն մեկը հինգ օսկի։ Ըսավ.—Այ իմ ախպեր, բիր տուր էտ պոչեր հ՝ըմմեն ընձի։

Տղեն հատը հինգ օսկու քաշեց ջհուդի ջանին։

Դու մ՝ըսի, թաքավորի խըշից մարթ կար հ՝ոտի կայնուկ, շուտըմ գնաց թաքավորին ըսեց, թե՝ «էն խափող ջհուդն հ՝ըմմեն պոչեր գնեց»։

Թաքավոր նորից թուխտ մե գրեց թե՝ «Ում գլխեն կախ-ված աղվըսու պոչիկ տեսա, ընդրան կախարան կը հանիմ»։

Ու էլ առնող չէղավ ջհուդից։

Հայը հարստցավ, ջհուդը քյասիբցավ։